

**ՄԻՋԱՅԵԼ ՍՈՎՈՐՈՎՅԱՆ**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Հայաստանի ազգային ազգարային համալսարանի հայցորդ

**ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱԾՆՈՐՀԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԱՐՏԱՍԱՀՍԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ  
ԿԻՐԱԾ-ՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածում քննարկվում է արտասահմանյան մի շաբթ երկրների բնական մենաշնորհի ձևավորման և վերափոխման էվոլյուցիոն զարգացումները, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և հատկապես Ականդինավյան երկրների փորձը: Առանձնահատուկ տեղ է հատկացվում բնական մենաշնորհի և ազատ մրցակցության հակամարտության պետական կարգավորման հարցերին: Ուսումնասիրելով Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի ու Դանիայի էներգետիկ դրսահամարդարձությունը՝ առաջարկվում է նույնանման մոտեցում ցուցաբերել Իրանի, Հայաստանի, Վրաստանի միջև էլեկտրահեռագիւղայի մեծածախ վաճառքի բորսայի ստեղծմանը, որն էլ գգային կրածրացնի էլեկտրահեռագիւղայի մատակարարման ու սպառման հուսալիության աստիճանը:

**Հիմնարարեր՝ մրցակցություն, բնական մենաշնորհ, պետական կարգավորում, քարեփոխումներ, սեփականաշնորհում, սակագին, բորսա, նորմատիվի իրավական ակտ:**

Զարգացած շուկայական տնտեսության երկրներում մեծ փորձ է կուտակվել բնական մենաշնորհի կարգավորման ուղղությամբ: Դրանց փորձի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է շուկայական հարաբերությունների ուղին ընտրած նորանկախ երկրների, այդ թվում՝ նաև Հայաստանի համար:

Այսպես, ԱՄՆ-ում, որտեղ առաջին մենաշնորհն առաջացավ էլեկտրահեռագիւղայի դրույթում դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներին (թեև՝ դեռևս 1887թ. Կանգան նահանգում գրանցվել էր երկարուղային տրանսպորտի մենաշնորհ), 1935թ. ընդունվեց օրենք հոլդինգային տիպի կոմունալ ընկերությունների մասին, որն էլ սահմանեց դրանց գործունեության վերահսկողության և կարգավորման չափանիշները, իսկ կարգավորման գործառույթը դրվեց արժեքորերի ու ֆոնդային բորսաների հանձնաժողովի (SEC) վրա: Բացի դրանց, հետագայում ձևավորվեցին էներգետիկայի կարգավորման, ԱՄՆ-ի աստումային էներգիայի կարգավորման, նահանգների կոմունալ սպասարկման հանձնաժողովներ: Սակագնային կարգավորումը գտնվում է նահանգների միջև առևտության հանձնաժողովի վերահսկողության ներքո, որոնք ունեն պետական իշխանության գործադիր մարմնի կարգավիճակ:

Մեծ Բրիտանիայում բնական մենաշնորհի պետական կարգավորումը ծագեց 1882թ. և հասավ իր զարգացման բարձրագույն աստիճանին՝ 20-րդ դարի 50-70-ական թվականներին: Արդյունաբերության բազային ճյուղերի ազգայնացման ընթաց-

քում 1947թ. ստեղծվեցին հատուկ կարգավորող մարմիններ՝ Կենտրոնական էներգետիկ վարչություն, ածխարարյունաբերության կենտրոնական վարչություն և այլն: Դրանց վերակազմավորումը կապված է բնական մենաշնորհի՝ 1990-ական թվականների վերակառուցավորման հետ:

Սկանդինավյան երկրներում կարգավորման գործառույթներով օժտված են պետական տարատեսակ կառույցներ՝ Առևտության և արդյունաբերության նախարարությունը (Ֆինլանդիա), Շրջակա միջավայրի և էներգետիկայի դիրեկտորատը (Նորվեգիա), Էներգետիկայի ազգային վարչությունը (Շվեդիա): Ֆրանսիայում և Բելգիայում առկա են կարգավորման նման համակարգեր: Այդ երկրներում 1986թ.-ից գործում են մրցակցության մասին օրենքներ, որոնց համաձայն՝ շուկաների վերահսկողություն իրականացնում են մրցակցության պետական խորհուրդները, բայց դրանց իրավունքները սահմանափակ են տնտեսության հատուկ ոլորտների համար, որոնց շարքին են դասվում պետական խոշոր ընկերությունները. մենաշնորհները «Փոստային ծառայություններ», «Գ-ազը և էլեկտրականությունը», «Երկարուղային բեռնափոխադրումները», «Հեռուստակոմունիֆակցիոն ծառայությունները»:

Ճապոնիայում, որտեղ տնտեսության պետական միջամտության մակարդակը ավանդաբար բարձր է, քան Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում, մշակված է բակալանդին ծկուն մեխանիզմ, ինչը հնարավորություն է տալիս արագ արձագանքել տնտեսության և բիզնեսի վերափոխմաներին: Շա-

պոնիայում տնտեսության բարեփոխումները, որն իրականացվեց նախորդ դարի վերջում, լնդգրկեցին նաև բնական մենաշնորհի ոլորտը: Սակայն այստեղ պահպանվում է Արտաքին առևտուրի և արդյունաբերության նախարարության հովանու ներքո գործող հատուկ կարգավորման մարմինները, ինչպես նաև բնական ռեսուրսների ու էներգետիկայի գործակալությունը:

Դետական կարգավորումն իրականացվում է տարբեր մեթոդներով՝ վարչական և տնտեսական, ուղղակի և անուղղակի: Զարգացած երկրներում, որպես կանոն, վարչական մեթոդները կիրառվում են սահմանափակ չափով՝ որևէ կոնկրետ խնդիրների (խնդրի) լուծման նպատակով, այդ թվում՝ նաև բնական մենաշնորհի: Դրանք իրացվում են կոնկրետ օրենսդրության կարգավորման ուղղակի միջամտությամբ, առաջին հերթին՝ լիցենզավորման ձևով: Վերջին տարիներին առաջնահերթությունը տրվում է տնտեսական մեթոդներին՝ նորմատիվային, հարկային, պայմանագրային, սակագնային կարգավորումներին: Իհարկե, մեթոդների բաժնումը կրում է պայմանական բնույթ, որի օրինակ է հանդիսանում գների վերահսկողությունը:

Սեր կարծիքով, բնական մենաշնորհի պետական կարգավորման հատուկ տեսակ է համարվում պետության մասնակցությունը, դրանց տնտեսական գործունեությանը, եթե պետությունը միաժամանակ հանդես է գալիս և ռազմավարական սեփականատիրոջ և ռազմավարական մենեջերի դերում: Այս կամ այն կողմնորոշումը, ավելի ճիշտ՝ ընտրությունը դրանց օպտիմալ հարաբերություններում, կախված է մի շարք գործուներից, բայց պատմական որոշակի ավանդույթները պահպանվում են:

Տնտեսական զարգացման արդի ժամանակաշրջանը բնորոշվում է շատ երկրներում կառուցվածքային բարեփոխումներով, որոնք լնդգրկում են նաև բնական մենաշնորհը: Բնական մենաշնորհի նպատակների ընդհանրությունը նկատվում է բոլոր երկրներում, և արտահայտվում է ծախսերի ու գների նվազման ձգտումով՝ բարեփոխվող ճյուղերի արդյունավետության բարձրացման հաշվին:

Բոլոր բարեփոխումներում ընդգծվում է ճյուղային մենաշնորհի ազատականացումը և մրցակցային շուկաների ստեղծումը, որտեղ առաջատար առաջարկել պահանջարկի փոփոխությանը: Բորսային գների և միասնական սակագների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար 1997թ. ստեղծվեց միասնական էլեկտրոնային տեղեկատվության ցանց՝ ինտերնետ բազայի վրա (OASIS): 2002թ. սկսվեց էլեկտրական մանրածախ գների ազատականացում՝ սպառողներին հնարավորություն տալով ինքնուրույն ընտրել մատակարարներին:

ԱՌՆ-ի էլեկտրական մեթոդների արդյունավորությունը արտագործումը հնարավոր է օգնի խուսափել որոշակի սխալներից: Մասնավորաբեր, մեծ զգուշավորությամբ կարելի է վերաբերել պետական կարգավորման գործառույթների ապակենատրունացմանը՝ Հայաստանի Հանրապետությունում: Սակագնային կարգավորման փոխանցումը տարածաշրջանային կառույցներին կարող է բերել առավել լուրջ և մասշտաբային հիմ-

կարևորությամբ է պայմանավորված, որ տվյալ ճյուղը դարձավ շուկայական վերափոխումների առաջատարը:

ԱՌՆ-ում էլեկտրական մեթոդների համեմատ, ունի ավելի ցածր մենաշնորհման աստիճան, բայց դրա շուկայական բարեփոխումների պահանջվածությունը զգացվել է վաղուց: Այդ երկրում էլեկտրական մեթոդների կարգությունը կարգացվել է 3 փուլերով՝ 20-րդ դարի 20-40-ական թվականներին, 50-70-ական թվականներին և 80-90-ական թվականներից մինչ օրս: ԱՌՆ-ի էներգետիկայի կառուցվածքը ներկայացված է 2 տեսակի ընկերությունների՝ կոմունալ և ոչ կոմունալ էներգությունունների միջոցով: Կոմունալ էներգորներությունները ստորաբաժանվում են մասնավոր էլեկտրական մեթոդի արտադրության՝ 68,1% տեսակարար կշռով, ֆեներալ էլեկտրական մեթոդների՝ 7,6%, այլ պետական ընկերությունները, այդ թվում՝ նահանգների, մունիցիպալ իշխանություններ՝ 9,1%, կոռպերատիվ ընկերություններ՝ 4,0%: Ոչ կոմունալ էներգորներությունները մասնավոր ընկերություններ են, որոնց բաժնին էլեկտրական մեթոդի արտադրությունում կազմում է 11,2%<sup>3</sup>:

1978թ. ընդունվեց օրենք կոմունալ էներգորներությունների կարգավորման մասին, որպես արձագանք՝ 70-ական թվականների ճգնաժամին, երբ նվազեց ոչ միայն ճյուղի արդյունավետությունը, այլ մի շարք նահանգներում տեղի ունեցավ էլեկտրական մեթոդի զագնվածային անջատումներ: Այդ օրենքը ոչ կոմունալ (մասնավոր) ընկերություններին հնարավորություն տվեց մեծածախ շուկաներում ձեռք բերել էլեկտրական մեթոդի և վերաբանական որոշակի ավանդույթները:

Բարեփոխումների ընթացքում ներդրվեցին նաև միասնական սակագներ, ինչը հնարավորություն տվեց արտադրողներին արագ արձագանքել պահանջարկի փոփոխությանը: Բորսային գների և միասնական սակագների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար 1997թ. ստեղծվեց միասնական էլեկտրոնային տեղեկատվության ցանց՝ ինտերնետ բազայի վրա (OASIS): 2002թ. սկսվեց էլեկտրական մանրածախ գների ազատականացում՝ սպառողներին հնարավորություն տալով ինքնուրույն ընտրել մատակարարներին:

ԱՌՆ-ի էլեկտրական մեթոդների արդյունավորությունը արտագործումը հնարավոր է օգնի խուսափել որոշակի սխալներից: Մասնավորաբեր, մեծ զգուշավորությամբ կարելի է վերաբերել պետական կարգավորման գործառույթների ապակենատրունացմանը՝ Հայաստանի Հանրապետությունում: Սակագնային կարգավորման փոխանցումը տարածաշրջանային կառույցներին կարող է բերել առավել լուրջ և մասշտաբային հիմ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նախնդիրների:

Սնձ Բրիտանիայում մինչև էներգետիկայի բարեփոխումների իրականացումը ոլորտը առանձնանում էր քնական մենաշնորհի պետական կարգավորման բարձր մակարդակով: Դրա բարեփոխման անհրաժեշտությունն ի հայտ եկավ դեռևս 1960-70-ական թվականներին: Կառավարությունը ձեռնարկեց մի շարք փորձեր, որոնք անհաջող ստացվեցին այն պատճառով, որ քնակչությունը չէր սատարում բարեփոխումները: 1970-ից մինչև 1980 թվականը երկիրը քնակուեց տնտեսական անկման գոտի, ինչը բացարկում էր տնտեսության շափից ավելի պետական միջամտությամբ: Իշխանության գալով՝ պահպանողական Մարզարետ Թետչերի կառավարությունը սկսեց իրականացնել զանգվածային պրիվատիզացիա (սեփականության մասնավորեցում) տնտեսական որոշակի ճյուղերում, այդ թվում՝ գազի և պողպատաձևլության արդյունաբերությունում, ավիացիայի ու տեկնոլոգիացիոն ոլորտներում: 1983թ. օրենք ընդունվեց Էլեկտրաէներգետիկայի մասին, որով ապահովում էր ազատ մուտք ազգային էներգետիկայի ցանցեր (Էլեկտրաէներգետիկայի անկախ արտադրողներին)՝ գեներիզացնող ընկերություններին, իսկ 1988թ.-ին՝ իրապարակվեց կառավարության ծրագրը՝ «Էլեկտրաէներգետիկայի մասնավորեցման Սպիտակ գիրը»: Դրանում ամրագրված էր պետական քաղաքականությունն այդ ճյուղում և բարեփոխումների մողելը, որում առաջատար տեղ է հատկացվում էներգետիկ ընկերությունների մասնավորեցմանը, որոնք գործում են էներգիայի արտադրության ու իրացման ոլորտում, իսկ էլեկտրաէներգիայի փոխանցումն ու դիսպեչերացումը մնաց քնական մենաշնորհի գործունեության տեսակ: Նշված ծրագրի հիմնական դրույթներն ամրագրված էին հատուկ օրենքներով և ենթաօրենսդրական նորմերով:

1990-ական թվականների վերջում նշանավորվեց մեծածախ շուկայի հետագա ազատականացմանը, ինչը պահանջեց փոփոխություններ մոցնել Էլեկտրաէներգետիկայի պետական կարգավորման մասին օրենսդրության մեջ: Կարգավորման մարմինների հիմնական գործառույթների ցանկում հատուկ տեղ է հատկացված սպառողների շահերի պաշտպանության պարտականությանը գնագոյացման ոլորտում, էներգամատակարարման անընդհատությանը և կայունության ապահովմանը, մատուցվող ծառայությունների որակի որոշակի մակարդակի ապահովմանը: Իրականացված բարեփոխումների արդյունքում էլեկտրաէներգիայի մանաւախ սակագինը 1990-ից մինչև 2000 թվականը նվազեց տնային տնտեսությունների համար 22, իսկ փորբ արդյունաբերական սպառողների համար՝ 39 տոկոսվ:

Այսպիսով, նույնիսկ գնագոյացման շուկայական կառուցակարգերի պայմաններում, ըստ անհրաժեշտության, պետության իրավունք է վերապահվում իրականացնել ճշգրտումների միջոցառումներ:

Բնական մենաշնորհի բարեփոխումները անհրաժեշտություն է տնտեսական զարգացման արդի փուլի համար: Տարբեր երկրների բարեփոխումների փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս տեսնել այդ գործընթացի օբյեկտիվ օրինաչափությունը: Նոյնիսկ այս երկրներում, որտեղ ճյուղի մոնուպուլացման մակարդակը և կարգավորման գործընթացներն էականորեն տարբերվում են իրարից, օրինակ, Սկանդինավյան երկրներում մշակված է Էլեկտրաէներգետիկայի բարեփոխումների ծրագիր Սկանդինավյան երկրների միասնական էներգետիկ շուկայի ձևակորման շրջանակներում:

Էլեկտրաէներգետիկայի ճյուղի գործունեության կարգավորման կառուցակարգերը էականորեն սահմանափակում են պետության միջամտության աստիճանը: Նրա հիմնական խնդիրը կայանում է օրենսդրական հիմքերի ապահովումը, գործառույթների և վերահսկողության իրականացումը նորմատիվ-իրավական առաջադրանքների կատարման համար:

Այս հարցում Հայաստանի Հանրապետության համար օրինակ կարող է ծառայել Սկանդինավյան երկրների փորձը: Այդ երկրներում էլեկտրաէներգետիկայի ոլորտի բարեփոխումներն ուղղեցվեցին նորմատիվ-իրավական հիմքի փոփոխություններով: Սկանդինավյան բոլոր երկրների պառամետները ընդունեցին մի շարք օրենսդրական ակտեր՝ ուղղված էլեկտրաէներգետիկայի իրավական հիմքերի վերափոխումներին: Առաջադրված խնդիրների իրականացման նպատակով մշակվեց շուկայի հայեցակարգ, սահմանվեց ճյուղի սուրյեկտների պատասխանատվության աստիճանը սպառողներին էլեկտրաէներգիայի անխափան ու հուսայի մատակարարման համար: Բայց դրա հետ միասին յուրաքանչյուր երկիր ունեցել է բարեփոխումների տարբերակված առանձնահատկություններ:

Այսպես, Նորվեգիայում բարեփոխումներն սկսվեցին հին նորմատիվ-իրավական հիմքի փոփոխման և նորի ձևակորման նոտեցումներով: 1991թ. օրենք ընդունվեց էներգետիկայի մասին, որով քնական մենաշնորհի և մրցակցության գործունեությունները բաժանվեցին իրարից: Արդեն 1992թ. Ազգային էներգետիկ ընկերությունը վերափոխվեց հիմնական ազգային ցանցային գործակության ընկերության (Statnett), որը ղարձավ նաև Նորվեգիայի էներգետիկ համալիրի օպերատորը: Հաջորդ քայլը եղավ փոքր արտադրողների մուտքի բոլորարումը

այդ ընկերություն: Կարենոր քայլ հանդիսացավ այն, որ էլեկտրաէներգիա սպառողները հնարավորություն ստացան փոխել մատակարարներին առանց որևէ լրացուցիչ ծախսերի, ինչն էլ նպաստեց զարգացնելու մրցակցային հարաբերությունները:

Էլեկտրաէներգետիկայի բարեփոխումները Շվեյշայում նույնպես սկսվեց 1991թ., որի առաջին քայլը եղավ էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման սուբյեկտների առանձնացումն իրարից: Այստեղ օրենքն ուժի մեջ մտավ 1998թ. հունվարի 1-ից, որն էական մեծ փոփոխություններ մտցրեց էլեկտրաէներգիայի վաճառքի կարգավորման և սպառողների իրավունքների պահպանման հարցում: Սկզբնական շրջանում սպառողներն իրավունք ստացան ընտրել մատակարարներին այն պայմանով, որ տեղադրեն ավելի բարդ և բանկարծեք հաշվիներ, որոնք ապահովում են ժամանակին չափումներ: Այնուհետև, 1999թ. նոյեմբերի 1-ից դադարեցվեց այդ պահանջները և բոլոր սպառողներին բույլատրվեց մուտք գործել էլեկտրաէներգիայի շուկա:

1996թ. Ֆինլանդիայում ընդունվեց էներգետիկայի մասին օրենք: Սկզբնական շրջանում շուկայի մասնակիցներ դարձան այն արտադրողները, որոնք բոլորին էին 500Կվտ-ից ավել: 1999թ. նոյեմբերին բույլատրվեց բոլոր արտադրողներին միայն այն պայմանով, որ չեն իրականացնում ժամանակին հաշվարկ:

Դանիայում էլեկտրաէներգիայի մատակարարման մասին օրենք ընդունվեց 1999թ.-ին: Շուկա մտնելու բույլտվություն ստացան միայն խոշոր արտադրողներն ու սպառողները (100 հազ. Կվտ-ից ավելի): Այնուհետև այդ նշագիծն իջեցվեց մինչև 10 հազ. Կվտ-ի: Օրենքին համապատասխան՝ 2003թ.-ից դանիական էլեկտրաէներգիայի շուկան բաց էր արդեն արտաքին և ներքին մրցակիցների համար:

Ինչպես տեսնում ենք, Սկանդինավյան երկրներում համատեղ էլեկտրաէներգետիկայի քաղաքականության իրականացման նպատակով ընդունվել է համալիր նարմատիվ-իրավական ակտեր, որոնք կարգավորում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում հարաբերությունները: Նոր օրենսդրությունում հիմք է ընդունվել էլեկտրաէներգետիկայի անվտանգության և աշխատանքի հուսալիթյան, շրջակա միջավայրի պաշտպանության նորմատիվ-իրավական պայմանները:

Ընդունված նորմատիվ-իրավական ակտերի հուրյունը կայանում է էներգետիկայի մրցակցության ոլորտում մրցակցության և մենաշնորհի բաժանելը, որը տարածվում է էլեկտրաէներգետիկայի արտադրության, փոխանցման և մատակարարման հարաբերությունների վրա:

Աշխարհում առաջինը էլեկտրաէներգիայի միջազգային ապրանքային բորսան ստեղծվել է Նորվեգիայում, 1993 թվականին՝ մասնագիտացված «Nord Pool» ընկերության կողմից: Սկզբնական շրջանում առևտորին մասնակցում էին միայն Նորվեգիան և Շվեյշիան, 1998-ին նրանց միացան Ֆինլանդիան և Դանիան: «Nord Pool»-ը դարձավ էլեկտրաէներգիայի առաջին ընկերությունը, որը միավորեց մի շարք երկրների շուկաներ: Նորվեգական և շվեյշական ընկերություններից յուրաքանչյուր իրականացնում են 50-ական տոկոս՝ գործառնական համակարգված օպերատորներով:

Էլեկտրաէներգիայի միջազգային շուկայի ձևավորմանը նախորդել է զգալի աշխատանքներ նոր մոտեցումների մշակման ուղղությամբ՝ կապված բնական մենաշնորհային ճյուղերի պետական կարգավորման հարցերի հետ: Մինչ այդ, Սկանդինավյան երկրները բավականին երկար ժամանակ համագործակցել են իրար հետ, նպատակ ունենալով ընդհանուր գումարային էներգուետրուստիկ օպտիմալ օգտագործման շնորհիվ բարձրացնել էլեկտրամատակարարման հուսալիության աստիճանը տարածաշրջանում: Էլեկտրաէներգետիկայի բարեփոխումների ընթացքում Նորվեգիան, Դանիան, Շվեյշիան և Ֆինլանդիան ոչ միայն ստեղծեցին էլեկտրաէներգիայի ներքին շուկաներ, այլ միավորեցին դրանց՝ ստեղծելով Սկանդինավյան երկրների էներգուանդինական պահանջմանը:

Սկանդինավյան էլեկտրաէներգետիկայի ընդհանուր շուկայի ստեղծումը հնարավորություն տվեց տարածաշրջանի երկրների միջև իրականացնել էլեկտրաէներգիայի փոխանակություն, ինչը բարձրացրեց Սկանդինավյան երկրների էներգուանդինակարգի աստիճանը. կրճատեց գործող գների տարբերությունը առանձին շրջաններում:

Էլեկտրաէներգիայի բարեփոխումների Սկանդինավյան երկրների, Անգլիայի և Ուելսի փորձը հիմք հանդիսացավ Եվրամիության կողմից 1996թ. դեկտեմբերի 19-ի իրահանգով էլեկտրաէներգիայի ներքին շուկաների աշխատանքի վերաբերյալ սկզբունքների մշակմանը: Եվրամիության բարձրագույն մարմինների կարծիքով՝ մրցակցության ձևավորման ընդհանուր մոտեցումները պետք է նպաստեն երկրի էներգուանդինակարգի միավորմանը և գուգակեռ աշխատանքների իրականացնանքը: Ընդ որում, պահպանվում է մասնակից պետությունների որոշակի ազատությունը սեփական էներգուանդինակարգի բարեփոխումների նպատակով կազմակերպական-տեխնիկական միջոցառումների ընտրությունը՝ պահպանելով նաև էներգետիկայի գործունեության միասնական տնտեսական պայմանները, շուկայի բացության աստիճանը և հավասար մուտքը բոլոր սպառողների համար:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերը հիշատակված հրահանգով սահմանվել է շուկայի մրցակցության նպատակների շարքը՝

- միավորված շուկայական կառույցում էներգիայի արտադրության, բաշխման, փոխանցման և իրացման ապահովում ամբողջ շուկայական տարածության մեջ,

- բոլոր երկրների, տարածաշրջանների տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների, բնակչության հուսալի էներգամատակարարում,

- էլեկտրաէներգիայի գնագոյացման քավանցիկության բարձրացում,

- շրջակա միջավայրի միասնական պահանջների պահպանում:

Համանման գործընթացներ իրականացվեցին Սեծ Բրիտանիայի երկարուղային տրանսպորտի ենթակառուցվածքների ոլորտում: Այդ գործընթացների շրջանակներում երկարուղիների ենթակառուցվածքները (երկարուղային ճանապարհներ, կապի համակարգեր, ազդանշաններ և այլն) հասկացվեց «Ուելստրեկ» ընկերությանը, այնուհետև այն նաևնավորեցվեց:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ դա կատարվել է երկու փուլով: Առաջին փուլում հիմնականում հաշվի է առնվել, որ բնական մենաշնորհի վերակառուցավորումը պետք է տանի մրցակցության ուժեղացմանը, իսկ այնուհետև մրցակցությունը կարգավորի շուկան: Սակայն, առաջին արդյունքներից պարզ դարձավ, որ մրցակցությունն ինքը կարիք ունի սատարման, իսկ կարգավորման գործառույթը չի սահմանափակվում միայն շուկայի ստեղծումով: Դա էլ հանդիսացավ բնական մենաշնորհի բարեփոխումների գործունեության կարգավորման երկրորդ փուլի էվոլյուցիոն սկիզբը:

Վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ այն պատկերացումը, թե էլեկտրաէներգետիկայում մասնավորեցումը, ապակարգավորումը և ազատականացումը ինքնին կապահովեն արդյունարերության ու կարողությունների բարմացման համար անհրաժեշտ ներդրումներ, չի գտնում իր հաստատումը բնական մենաշնորհների բարեփոխումների պրակտիկայում:

Նկարագրված փորձից կարելի է եզրակացություն անել, որ բնական մենաշնորհի բարեփոխված շուկայում ինտեգրացիոն գործընթացներն ընթանում են բացարձակապես շուկայական ուժերի ազդեցության ներքո և բարեփոխումից հետո զգալի շափով նպաստում են բիզնեսի արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, որոշակի սկայամաններում մրցակցային հարաբերությունների զարգացման համար կարող են առաջանալ արգելվներ և միշտ էլ պետք է հանդիսանան պետա-

կան կարգավորման օբյեկտ:

Բնական մենաշնորհի բարեփոխումների վերլուծությունը հիմնավորում է, որ՝

1. մրցակցությունը մաքսիմալ արդյունավետ է այն ժամանակ, եթե միաժամանակ գործում է և արտադրության, և վաճառքի ոլորտներում: Դրա ապահովման համար անհրաժեշտ է, որ գործառույթները բաժանված լինեն նրանց միջև, իսկ շուկայի բոլոր սուբյեկտներն ունենան ենթակառուցվածքներ ազատ մուտք գործելու իրավունք (էլեկտրացանցեր, երկարուղային գծեր, գազային հաշվիչներ և այլն),

2. բնական մենաշնորհի բոլոր ոլորտներում բարեփոխումների արդյունավետության բարձրացման և ներդրումների ներգրավման համար, առաջին հերթին, պետք է խթանել շուկայական գնագոյացման կառուցակարգերի ձևավորումը:

Սակայն, պրակտիկ փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է խնամքով մոտենալ բնական մենաշնորհի ճյուղերում մրցակցային հարաբերությունների ներդրման որոշումներին, գնահատելով ոյսկերպ և սպասվող օգուտներն այդ ներդրումներից, ինչպես նաև հասկանալ մրցակցային գործունեության կարգավորման համար հնարավորությունների սահմանափակությունը:

Բնական մենաշնորհի բարեփոխումների փորձը ցույց է տալիս նաև, որ մրցակցային հարաբերությունների գործունեությունը չի կարող լինել միանգամյա գործունեություն: Ծովայի նախագծման սխալները, ճյուղերի կառուցվածքային փոփոխությունների հնարավորությունների սահմանափակությունը և այլ գործուների ազդեցությունը բերում են նրան, որ բնական մենաշնորհի գործունեության բարեփոխումների հիմնական խնդիրները դառնում են մրցակցային հարաբերությունների զարգացման ու սատարման կարևոր հարցերից մեկը:

Այսպիսով, վերլուծելով տարբեր երկրների բնական մենաշնորհի բարեփոխումների գործունեության ընթացքը՝ կարելի է նշել, որ դրա ուսումնասիրությունը Հայաստանի համար պահանջված է, ինչն առաջին հերթին կլողմնորոշի հանրապետության բնական մենաշնորհի գործունեությունն ուղղորդել ճիշտ ճանապարհով, թույլ շտալ ավելորդ ծախսերի իրականացում, ուրիշների սխալների կրկնություն և համեմատաբար կարճ ժամանակահատվածում դրանց գործունեությունը դրաձնել առավել արդյունավետ: Հայաստանի համար ուսանելի կինդի Ականդինավյան երկրների փորձը՝ կապված էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկայի ձևավորման հետ, որը կարելի է օգտագործել Իրան, Հայաստան և Վրաստան համանման շուկայի ստեղծման հարցում:

- <sup>1</sup> Губанов С., Системная уязвимость энергетики США: причины и условия, М.: Экономист., 2003, N 3.
- <sup>2</sup> Сергеева О., Европейская энергетическая хартия: pro и contra для России, М., Мировая политика, 2002, N 4.
- <sup>3</sup> Международный опыт реформирования электроэнергетики: РАО «ЕЭС России», 2003, с. 8.
- <sup>4</sup> Экономика России в 2004 году. - Прогноз Фонда перспективных исследований и инициатив Института МЭиМО РАН, 29.12.2003.
- <sup>5</sup> Колодей Л.Г., Реформирование электроэнергетики как шаг к экономическому росту (на примере России и Норвегии) // Э О, 2006, N 4. с. 144-155.
- <sup>6</sup> Баландин Д.В., Структура и особенности рынка электроэнергии: международный анализ (на примере ряда стран-членов ОЭСР) // Вестник СПбГУ, 2005, Сер. 8, Вып. 3, с. 182-191.
- <sup>7</sup> Гительман Л.Д., Ратников В.И., Реформа электроэнергетики: оценка эффективности и корректировка курса // Энергрынок, М., 2009, N 2.
- <sup>8</sup> Трычук А.В., Оценка состояния конкурентной среды на оптовом рынке электроэнергии // Экономические науки, М., 2010, N 5 (66), с. 124-129.
- <sup>9</sup> Директива 96/92 ЕК Европейского парламента и Совета Европейского Союза от 19 декабря 1996, по вопросам общих правил внутреннего рынка электроэнергии.

Микаэл Согомонян

Заместитель председателя комиссии по регулированию общественных услуг Республики Армения,  
Соискатель Национального аграрного университета Армении

## РЕЗЮМЕ

### *Возможности применения иностранных механизмов в регулировании естественной монополии*

В статье обсуждается опыт эволюционного развития формирования и реформирования естественных монополий в ряде иностранных государств, в частности в США, Великобритании и особенно в Скандинавских стран. Особое внимание уделяется вопросам государственного регулирования в противостоянии естественной монополии и свободной конкуренции. Изучая системное функционирование энергетической сферы Норвегии, Швеции, Финляндии и Дании, предлагается применить похожий подход к созданию оптовой биржи по продаже электроэнергии Ирана-Армении-Грузии, что в значительной степени поднимет надежность поставки и применения электроэнергии.

**Ключевые слова:** конкуренция, естественная монополия, государственное регулирование, реформы, приватизация, тариф, биржа, нормативно-правовой акт.

Mikayel Soghomonyan

Deputy chairman of public services regulatory commission of the Republic of Armenia,  
The PhD student of the Armenian National Agrarian University

## SUMMARY

### *The possibilities of impact of foreign mechanisms in regulation of natural monopoly*

The article discusses the experience of the evolutionary development of the formation and reform of natural monopolies in a number of foreign states, in particular: the USA, Great Britain, and especially the Scandinavian countries. Particular attention have been paid to issues of state regulation in the confrontation of natural monoplia and free competition. Studying the systemic functioning of the energy sector in Norway, Sweden, Finland and Denmark, it is proposed to apply a similar approach for the creation of a wholesale exchange for the sale of electricity of Iran-Armenia-Georgia, which will significantly increase the reliability of supply and use of electricity.

**Keywords:** competition, natural monopoly, state regulation, reforms, privatization, tariff, exchange, regulatory act.